ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի հերթական նիստի.

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը, Արմենուհի Ոսկանյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Շուշանիկ Հակոբյանը և Արշակ Սրապյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Նաիրա Հարությունյանը:

Նիստից բացակայում էին.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սամվել Անանյանը, Սերյոժա Սարդարյանը, Աշոտ Անտինյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ Սևակ Խաչատրյանը, Սասուն Մարանդյանը և Թիանա Բոջուկյանը՝ հարգելի պատճառներով:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 6-րդ հարց և որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ.

6. ,,Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում,, բյուջետային ծրագրին Փամբակ համայնքի մասնակցությանը հավանություն տալու մասին:

Կողմ՝ 9 ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Կողմ՝ 9, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Փամբակ համայնքի 2022թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

2. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

3. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Փամբակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

5. ,,Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում,, բյուջետային ծրագրին Փամբակ համայնքի մասնակցությանը հավանություն տալու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի 2022թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2022թ-ի աշխատանքային պլանը մշակվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) «Լավ կառավարում տեղական զարգացման ծրագրի համար Հարավային Կովկաս» ծրագրի շրջանակներում՝ Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) կողմից մշակված ուղեցույցի համապատասխան: Պլանում արտացոլված է համայնքի բյուջեով, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցով համայնքում 2022թ-ին իրականացվելիք բոլոր ծրագրերը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ բազմաթիվ քաղաքացիներ դիմել են հողամասեր գնելու առաջարկով, առկա են նշված հողակտորների համայնքային սեփականության վկայականները և համայնքի ավագանու համաձայնության դեպքում կիրականացվի հողամասերի աճուրդ և վարձակալության մրցույթ: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9 ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ - ,,Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում,, բյուջետային ծրագրին Փամբակ համայնքի մասնակցությանը հավանություն տալու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ նախատեսվում է Արջուտ և Ազնվաձոր բնակավայրերում ներդնել այլընտրանքային նախադպրոցական հաստատություններ, քանի որ այս ծրագրը ծախսարդյունավետ է: Առաջարկվում է համայնքի ավագանուն տալ հավանություն՝ ծրագրին մասնակցելու համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2022 թվականի հոկտեմբերի 14-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, ընդունվեց որոշում:

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022 թվականի հոկտեմբերի 14-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Ա. ՍՐԱՊՅԱՆ Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ. ՊԱՊԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 113-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 16-րդ հոդվածի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի սեպտեմբերի 15-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

,, 15 ,, սեպտեմբերի 2022թ-ի թիվ 12 հերթական նիստի

1. Փամբակ համայնքի 2022թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
2. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, մրցույթի և աճուրդի պայմանները հաստատելու մասին:
3. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
4. Փամբակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
5. ,,Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում,, բյուջետային ծրագրին Փամբակ համայնքի մասնակցությանը հավանություն տալու մասին:
6. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 114-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Փամբակ համայնքի 2022թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 115-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Հողային օրենսգրքի,, 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ,,Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում են հողատեսքեր 22 լոտով.

-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0102-0038 ծածկագրով 0.045 հա գյուղատնտեսական այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0039-0008 ծածկագրով 0.052679 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 76000 /յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 3: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0035-0014 ծածկագրով 0.021955 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 32000 /երեսուներկու հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 4: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0036-0002 ծածկագրով 0.01159 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 17000 /տասնյոթ հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 5: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0045-0010 ծածկագրով 0.01135 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 6: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0001-0012 ծածկագրով 0.06478 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս:: Մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 7: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-0131-0018 ծածկագրով 0,030520 հա գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 48000 /քառասունութ հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 8: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0074-0008 ծածկագրով 0,021885 հա գյուղատնտեսական այլ հողատեսք: Մեկնարկային գինը սահմանել 11000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 9: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0078-0028 ծածկագրով 0,012088 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 18000 /տասնութ հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 10: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-103-0007-0019 ծածկագրով 0,139564 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 11: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0073-0005 ծածկագրով 0,265928 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 246000 /երկու հարյուր քառասունվեց հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 12: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0241 -0026 ծածկագրով 0.25081 հա, գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 74000 /յոթանասունչորս հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 13: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0051-0017 ծածկագրով 0.69128 հա, բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 692000 /վեց հարյուր իննիսուներկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 14: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0051-0016 ծածկագրով 0.07145 հա, բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 72000 /յոթանասուներկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 15: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0044-0002 ծածկագրով 0.26183 հա, բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 262000 /երկու հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 16: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0051-0015 ծածկագրով 0,236433 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 142000 /հարյուր քառասուներկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 17: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0215-0008 ծածկագրով 0.095 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 320000 /երեք հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 18: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0241-0026 ծածկագրով 0.25081 հա գյուղատնտեսական 3-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 290000 /երկու հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 19: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-102-0012-0046 ծածկագրով 0,334518 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 480000 /չորս հարյուր ութանասուն հազար/ ՀՀ դրամ:

-Լոտ 20: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-059-0072-0001 ծածկագրով 0,234820 հա բնակավայրերի այլ հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 222000 /երկու հարյուր քսաներկու հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 21: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-107-0041-0011 ծածկագրով 0.374370 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 820000 /ութ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 22: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-107-0409-0025 ծածկագրով 0.155036 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամաս: Մեկնարկային գինը սահմանել 340000 /երեք հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում է գյուղատնտեսական նշանակության հողամասեր 2 լոտով.
-Լոտ 1: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-023-0212-0564 ծածկագրով 0.223873 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 4000 /չորս հազար/ ՀՀ դրամ:
-Լոտ 2: Համայնքային սեփականություն հանդիսացող 06-041-0203-0104 ծածկագրով 0,11987 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահող՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ :

Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 116-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.08.2022թ. թիվ 114 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 01 /111.3/07072-2022 - 25/08/2022 գրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Փամբակ համայնքի Վահագնաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող, 06-102-0040-0008 ծածկագրով 0.6035 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հանդիսացող հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխություն պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Վահագն Շահնազարյանին պարտավորեցնել համայնքի բյուջե վճարել 767350.25 դրամ (յոթ հարյուր վաթսունյոթ հազար երեք հարյուր հիսուն դրամ, քսանհինգ լումա):

3. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 117-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Փամբակ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 118-Ա

,,ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ,, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՀՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Տալ հավանություն Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում ,,Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում,, բյուջետային ծրագրի շրջանակներում այլընտրանքային նախադպրոցական հաստատության ստեղծմանը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, 1 փող. 23, pam-bak@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 119-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2022թ-ի հոկտեմբերի 14-ը ժամը 13.00:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
ՍՐՍՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 15
գ.Փամբակ